ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/43

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2837-2020 գրությամբ «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ին և «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 24.02.2020թ. թիվ ՊՆ/1/1/548-2020 գրության հիման, վրա 27.02.2020թ. թիվ 26/26-1/2837-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ին և «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Վիէյչ Գրուպ» ՍՊ և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի և «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունները, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/43 ընթացակարգի շրջանակներում 03.03.2020թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չեն ապահովել իրենց ներկայացուցիչների մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.02.2020թ. թիվ ՊՆ/1/1/548-2020 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) միջև 09.08.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-4/4-1 գնման պայմանագրի (փոփոխություն N 1 առ. 30.09.2019թ.) 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. փետրվարի 14-ին միակողմանի, մասնակի՝ 952 հատ փայտե արկղերի մասով, լուծել է N ԳՀԱՊՁԲ-4/4-1 գնման պայմանագիրը (հետայսու նաև՝ Պայմանագիր):

Միաժամանակ տեղեկացնելով, որ վերոնշյալ պայմանագրի մասնակի լուծման վերաբերյալ գրությունը 19.02.2020թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/43 ընթացակարգի շրջանակներում 03.03.2020թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/43 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/43 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) միջև 09.08.2019թ. կնքվել է ԳՀԱՊՁԲ-4/4-1 ծածկագրով ապրանքի մատակարարման գնման պայմանագիր, որի համաձայն՝ Կոնսորցիումը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 17.02.2020թ. թիվ ԴՎԱ/542 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի բ» պարբերությունը՝ 2020թ. փետրվարի 14-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

3.Պատվիրատուի կողմից 19.02.2020թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ԳՀԱՊՁԲ-4/4-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2837-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.02.2020թ. թիվ ՊՆ/1/1/548-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել

գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) միջև

09.08.2019թ. կնքվել է ԳՀԱՊՁԲ-4/4-1 ծածկագրով ապրանքի մատակարարման գնման պայմանագիր, որի համաձայն՝ Կոնսորցիումը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) միջև 30.09.2019թ. կնքված ԳՀԱՊՁԲ-4/4-1 ծածկագրով պայմանագրի N 1 փոփոխության համաձայն՝ կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում (հավելվածներ՝ 1 և 2) կատարել համապատասխան փոփոխություն, որը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

Պայմանագրի գինը սահմանվել է 53 760 000 ՀՀ դրամ:

Պայմանագրի թիվ 1 փոփոխությամբ սահմանվել է հետևյալը.

- մինչև գնման ժամանակացույցի փոփոխությունը փայտե արկղերի (152մմ Դ-20 կրակոցի արկղ) մատակարարումը պետք է իրականացվի 2019թ., ըստ եռամսյակների՝ 3-րդ եռամսյակ՝ 1400 հատ, 4-րդ եռամսյակ, ոչ ուշ քան 30.11.2019թ.՝ 600 հատ:
- թիվ 1 փոփոխությամբ փայտե արկղերի (152մմ Դ-20 կրակոցի արկղ) մատակարարումը պետք է իրականացվի 2019թ., ըստ եռամսյակների՝ 4-րդ եռամսյակ, ոչ ուշ քան 30.10.2019թ.՝ 1400 հատ, 4-րդ եռամսյակ, ոչ ուշ քան 30.11.2019թ.՝ 600 հատ:

Համաձայն Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից 17.01.2020թ Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ կազմված բացասական եզրակացության՝ Ընկերության կողմից 952 հատ փայտե արկղերի մատակարարում չի իրականացվել: Ըստ գնման ժամանակացույցի 30.12.2019թ. դրությամբ ուշացած օրերը կազմում են 600 հատը 30 օր, իսկ 352 հատը 60 օր:

ՀՀ պաշտպանության նախարարությունը Ընկերությանն ուղղված 17.02.2020թ. թիվ ԴՎԱ/542 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) միջև 09.08.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-4/4-1 գնման պայմանագրի (փոփոխություն N 1 առ. 30.09.2019թ.) շրջանակներում Ընկերությունը պարտավորվել էր

մինչև 30.11.2019թ. մատակարարել 2000 հատ փայտե արկղեր (152մմ Դ-20 կրակոցի արկղ), սակայն մատակարարվել է 1048 հատ փայտե արկղեր, իսկ 952 հատ արկղերի մասով մատակարարում չի իրականացվել:

Ամփոփելով՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի բ» պարբերությունը՝ 2020թ. փետրվարի 14-ին միակողմանի մասնակի՝ 952 հատ փայտե արկղերի մասով, լուծել է Պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից 19.02.2020թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ԳՀԱՊՁԲ-4/4-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Պայմանագրի 8.11 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն վաճառող կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>20 օրից ավելի</u>,***

Այսպիսով՝ «Վիէյչ Գրուպ» ՍՊ և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների կոնսորցիումն իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 09.08.2019թ. կնքված

Պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով և ժամկետներում, այն է՝ 2019թ., ըստ եռամսյակների՝ 4-րդ եռամսյակ, ոչ ուշ քան 30.10.2019թ.՝ 1400 հատ, 4-րդ եռամսյակ, ոչ ուշ քան 30.11.2019թ.՝ 600 հատ փայտե արկղերի (152մմ Դ-20 կրակոցի արկղ) ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարելու պարտականությունը: Արձանագրում եմ, որ Կոնսորցիումը Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ չի մատակարարել Պայմանագրով նախատեսված 952 հատ փայտե արկղեր, և ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 20 օրից ավելի, որի հետևանքով Կոնսորցիումը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

....

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ համատեղ գործունեության (կոնսորցիում) դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է, և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Պայմանագրի 8.6-րդ կետով սահմանվել է, որ քանի որ Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամ կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Նման պայմաններում, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Վիէյչ Գրուպ» ՍՊ և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունները թույլ են տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2837-2020 գրությամբ «Վիէյչ Գրուպ» ՍՊ և Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վիէյչ Գրուպ» ՍՊ և Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերություններին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**